

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2026

ՀՈՒԼԻՍ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

Նշվածներից ո՞ր աշխարհագրական մշակույթի բաղադրիչ չէ:

- 1) պատմական հետազոտության մեթոդները
- 2) աշխարհագրության լեզուն
- 3) աշխարհի աշխարհագրական պատկերը
- 4) աշխարհագրական մտածողությունը

2

Քանի՞ փուլ ունի դաշտային հետազոտության մեթոդը.

- 1) 4
- 2) 5
- 3) 2
- 4) 3

3

Հորիզոնի ո՞ր կողմի ազիմուտն է 270° :

- 1) հյուսիսային
- 2) արևմտյան
- 3) հարավային
- 4) արևելյան

4

Միջին լայնությունները քարտեզի վրա պատկերելու համար առավել հաճախ ո՞ր պրոյեկցիան են կիրառում:

- 1) գլանային
- 2) կոնային
- 3) հասարակածային
- 4) ազիմուտային

5

Բնութագրումով որոշել վարկածը.

Ելակետ ընդունելով այդ վարկածը՝ գիտնականները եզրակացնում են, որ Երկրի վրա կուտակված հսկայածավալ ջուրն արտահոսել է ընդերքից, Երկրի տաքացումը՝ սկսվել կենտրոնից: Ո՞րն է այդ վարկածը:

- 1) պատահարային
- 2) խորքային գրավիտացիոն
- 3) միզամածային
- 4) երկնաքարային

6


Ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ամսաթվի փոփոխման գիծն անցնում է գլխավոր միջօրեականով:
- 2) Դելիի գոտիական ժամանակն առաջ է Երևանի գոտիական ժամանակից:
- 3) Օրվա նույն ժամը կարող է լինել միայն նույն գուգահեռականի վրա:
- 4) Միջօրեականի վրա տվյալ պահին դիտված ժամանակը կոչվում է դեկրետային ժամանակ:

7


Նկար 1-ում n՞ր տառով է նշված հրաբխի մղանցքը:

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



8

Նկար 2-ում n՞ր հարթավայրն է նշված Դ տառով:




- 1) ցածրավայր
- 2) դաշտավայր
- 3) սարահարթ
- 4) բարձրավայր

9

Ո՞ր քամիներն են պատկերված նկար 3-ում:

- 1) պասսատներ
- 2) լեռնահովտային քամիներ
- 3) բրիզներ
- 4) մուսսոններ




նկար 3

10

Նկար 4-ում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը բարեխառն լայնություններում:

- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2



Նկար 4

11

Համաշխարհային օվկիանոսի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ցունամիի առաջացման հիմնական պատճառը մշտական ուղղություն ունեցող քամիներն են:
- 2) Լուսնի ձգողական ուժի հետևանքով օրական երկու անգամ օվկիանոսի ջրի մակարդակի իջեցումը կոչվում է տեղատվություն:
- 3) Օվկիանոսի այն հատվածը, որը ներթափանցել է ցամաքի մեջ, կոչվում է նեղուց:
- 4) Առավել մեծ աղիություն ունեն հասարակածային գոտու ջրերը:

12

Գետի ակունքի բացարձակ բարձրությունը 2500 մ է, գետաբերանինը՝ 1600 մ, երկարությունը՝ 150 կմ: Գետի թեքությունը կլինի.

- 1) 15 մ/կմ
- 2) 8 մ/կմ
- 3) 12 մ/կմ
- 4) 6 մ/կմ

13

Մթնոլորտի ո՞ր շերտն է ֆիլտրում ուլտրամանուշակագույն ճառագայթների մեծ մասը.

- 1) օզոնի շերտը
- 2) ջերմոլորտը
- 3) ներքնոլորտը
- 4) վերնոլորտը

14


Նշվածներից որի՞ միավորն է արտահայտվում տոկոսներով.

- 1) օդի ջերմաստիճան
- 2) բացարձակ խոնավություն
- 3) մթնոլորտային ճնշում
- 4) հարաբերական խոնավություն

15

Նկար 5-ում ո՞ր թվով է պատկերված հասարակածային խոնավ անտառների զոնան:

- 1) Գ
- 2) Դ
- 3) Ա
- 4) Բ



16

Տայգայի բնական զոնան հիմնականում ո՞ր հողերի վրա է տարածվում:

- 1) պոդզոլային
- 2) դարչնագույն
- 3) լատերիտային
- 4) կարմրագորշ

17 Քարտեզ 1-ում Բ տառով նշված կետի ներուցն է նշված.

- 1) Ջիբլարթարի
- 2) Թորրեսի
- 3) Մալակկայի
- 4) Բերինգի

18 Քարտեզ 1-ում Ա տառով նշված կետի քաղաքն է նշված.

- 1) Ադեն
- 2) Մումբայ
- 3) Չենայ
- 4) Սինգապուր



Քարտեզ 1

19

Աֆրիկայի վերաբերյալ պնդումներից ո՞րն է ճիշտ:

- 1) Մայրցամաքի վրա ձևավորվում է մթնոլորտային ճնշման չորս մարզ՝ երկու բարձր, երկու ցածր:
- 2) Կանարյան սառը հոսանքը մեծ դեր է խաղացել Սահարա անապատի առաջացման գործում:
- 3) Արևմուտքում գտնվող Կամերուն գործող հրաբուխը մայրցամաքի ամենախոնավ շրջանն է:
- 4) Կլիման ձևավորող գլխավոր գործոնը ռելիեֆն է:

20

Ո՞ր գետն է երկու անգամ հատում հասարակածը:

- 1) Նեղոս
- 2) Նիգեր
- 3) Օրանժ
- 4) Կոնգո

21

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հյուսիսային Ամերիկայում Միսսուրի գետը հորդանում է ձմռանը:
- 2) Հյուսիսային Ամերիկայում ամենամեծ տարածում ունի անապատների և կիսաանապատների զոնան:
- 3) Հյուսիսային Ամերիկայի հյուսիսային մասի մակերևույթի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել սառցադաշտերը:
- 4) Հյուսիսային Ամերիկան Գրենլանդիայից բաժանվում է Բերինգի նեղուցով:

22

Հյուսիսային Ամերիկայում չեն ապրում.

- 1) սպիտակ արջն ու լեմինգը
- 2) որմզդեղն ու բիզոնը
- 3) լաման ու նանդու ջայլամը
- 4) կարիբուն ու խոյացույրը

23

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Կարիբյան ծովի ափերին և Անդերի հյուսիսային մասերի միջլեռնային ձկվածքներում կան նավթի հարուստ պաշարներ:
- 2) Լա Պլատայի դաշտավայրը շատ հարուստ է ոսկու պաշարներով:
- 3) Անդերը հարուստ է հատկապես պղնձի պաշարներով:
- 4) Բրազիլական և Գվիանական սարահարթերի հնագույն հիմքի բյուրեղային ապարները հարուստ են երկաթի և մանգանի պաշարներով:

24

Ո՞ր գետը Հարավային Ամերիկայում չէ:

- 1) Պարանա
- 2) Օրինոկո
- 3) Ամազոն
- 4) Յանգզի

25

Ո՞ր ծովը Ավստրալիայի ափերը չի ողողում:

- 1) Թասմանի
- 2) Արաֆուրյան
- 3) Բոֆորտի
- 4) Կորալյան

26

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Ատարկտիդան ամբողջությամբ ընկած է հարավային բևեռային շրջագծի և Հարավային բևեռի միջև:
- 2) Անտարկտիդան Հրո երկիր կղզեխմբից բաժանվում է Դրեյկի լայն ու փոթորկոտ նեղուցով:
- 3) Անտարկտիկան մայրցամաք է, իսկ Անտարկտիդան՝ աշխարհամաս:
- 4) Անտարկտիդային ամենամոտ մայրցամաքը Հարավային Ամերիկան է:

27

Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի կարևոր իրադարձությունն չէ:

- 1) ԱՄՆ-ի կազմավորումը
- 2) ԽՍՀՄ-ի փլուզումը
- 3) ՆԱՏՕ-ի և ՎՊԵ-ի ստեղծումը
- 4) ԽՍՀՄ-ի կազմավորումը

28

Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Երկրաչափական սահմանն ուղիղ գիծ է, որը միացնում է պետական սահմանի որոշակի կետեր՝ առանց հաշվի առնելու տեղանքի ռելիեֆային պայմանները:
- 2) Աշխարհագրական (աստղագիտական) սահմանը կարող է համընկնել այս կամ այն միջօրեականի կամ զուգահեռականի հետ:
- 3) Սահմանարկումը տեղանքում պետական սահմանի անցկացումն է, նրա աշխարհագրական կոորդինատների որոշումը, սահմանանշանների միջոցով սահմանագծի անցկացումը:
- 4) Լեռնագրական սահմանները գլխավորապես անցնում են բնական սահմաններով, հիմնականում՝ լեռնաշղթաներով ու գետերի հունով:

29

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Խորհրդարանական հանրապետությունում երկրի նախագահն ընտրվում է ոչ թե անմիջապես ժողովրդի, այլ խորհրդարանի կողմից:
- 2) Աշխարհի երկրների ճնշող մեծամասնության վարչատարածքային կառուցվածքը դաշնային է:
- 3) Միապետություններում երկրի օրենսդիր ու գործադիր իշխանությունների գործունեությունը ղեկավարում է նախագահը:
- 4) Միասնական պետության վարչատարածքային միավորներն ունեն որոշակի քաղաքական ինքնավարություն:

30

Ընտրել պետությունների ճիշտ շարքն՝ ըստ դրանց տարածքի մակերեսի աճման հաջորդականության.

- 1) Ավստրալիա, Հնդկաստան, Բրազիլիա, Կանադա
- 2) Կանադա, Չինաստան, ԱՄՆ, Բրազիլիա
- 3) Բրազիլիա, Ավստրալիա, Մուդան, Ղազախստան
- 4) ԱՄՆ, Չինաստան, Կանադա, Ռուսաստան

31

Ո՞ր երկիրն ունի 100 մլն-ից պակաս բնակիչ

- 1) Հնդկաստան
- 2) Ճապոնիա
- 3) Պակիստան
- 4) Ֆրանսիա

32

Բնակչության շարժի հետևանքով ներգաղթողների ու արտագաղթողների տարբերությունը կոչվում է.

- 1) բնակչության վերարադրություն
- 2) բնակչության մեխանիկական շարժ
- 3) բնակչության կազմ
- 4) բնակչության բնական աճ

33

Կյանքի միջին տևողությունը առավելապես պայմանավորված չէ.

- 1) ուրբանիզացիայի մակարդակով
- 2) բարձր մահացությամբ
- 3) բնակչության ցածր կենսամակարդակով
- 4) բուժսպասարկման մակարդակով

34

Հնդեվրոպական լեզվաընտանիքի լեզվախումբ է.

- 1) սեմականը
- 2) գերմանականը
- 3) չինականը
- 4) թուրքականը

35

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Պողպատի ձուլման ձեռնարկությունները կառուցվում են գիտական կենտրոնների մոտ:
- 2) Ջրաէլեկտրակայանները հիմնականում կառուցվում են հարթավայրային գետերի վրա:
- 3) Աէկ-ներն ապահովում են աշխարհում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին:
- 4) Ծանր գունավոր մետաղների ձուլումը կողմնորոշվում է դեպի հումքի բազաները:

36

Նյութական արտադրության ո՞ր ճյուղն է առավել նյութատար ու տեղաբաշված է հանքի մոտ:

- 1) սննդի արդյունաբերություն
- 2) մեքենաշինություն
- 3) վառելիքի արդյունահանում
- 4) էլեկտրաէներգետիկա

37

«Հանքավայր-հանքատեսակ» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Նորիլսկ-երկաթ
- 2) Մամոտլոր-նավթ
- 3) Մուրգուտ-ածուխ
- 4) Մագադան-գազ

38

Ընտրել «պետություն-մայրաքաղաք» համապատասխանությունների ճիշտ շարքը:

- | | |
|-------------|--------------|
| 1. Ուկրաինա | ա. Ջագրեբ |
| 2. Բուղարիա | բ. Սոֆիա |
| 3. Խորվաթիա | գ. Բուխարեստ |
| 4. Ռումինիա | դ. Կիև |

- 1) 1-դ, 2-բ, 3-ա, 4- գ
- 2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 3) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
- 4) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա

39

Վենտրոնական Ասիայի տրված պետություններից ո՞րն ունի ելք դեպի Կասպից ծով:

- 1) Ղազախստան
- 2) Ղրղզստան
- 3) Ուզբեկստան
- 4) Տաջիկստան

40

«Մշակարույս-մշակող առաջատար երկիր» գույգերից ընտրել ճիշտը:

- 1) սուրճ-Մարոկկո
- 2) կակաո-Ալժիր
- 3) գետնանուշ-Թունիս
- 4) մանիոկ-Նիգերիա

41

Ո՞ր կղզեխումբն է գտնվում Օվկիանիայում:

- 1) Ճապոնական
- 2) Կուրիլյան
- 3) Ֆիլիպիններ
- 4) Միկրոնեզիա

42


ԱՄՆ-ի ո՞ր քաղաքն է գտնվում Խաղաղ օվկիանոսի ափին:

- 1) Նյու Յորք
- 2) Հյուսթոն
- 3) Լոս Անջելես
- 4) Դեթրոյթ

43

Լատինական Ամերիկայում խոշոր եղջերավոր անասնապահության զարգացմամբ ո՞ր երկիրն է առաջատար:

- 1) Ուրուգվայ
- 2) Վենեսուելա
- 3) Պարագվայ
- 4) Արգենտինա



քարտեզ 2

44 Քարտեզ 2-ում Մարտունի քաղաքը ո՞ր տարածվ է նշված.

- 1) Դ
- 2) Լ
- 3) Է
- 4) Բ

45 Քարտեզ 2-ում Կոտայքի մարզը ո՞ր տարածվ է նշված.

- 1) Գ
- 2) Ե
- 3) Զ
- 4) Ս

46 Լեռնագրական ո՞ր մարզը Միջնաշխարհի մեջ չի մտնում.

- 1) Ներքին Տավրոս
- 2) Միջլեռնային գոգավորություններ
- 3) Զագրոսի լեռներ
- 4) Հայկական հրաբխային բարձրավանդակ

47

ՀՀ Լոռու մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Ամենացածրադիր քաղաքը Վանաձորն է:
- 2) Ամենափոքր քաղաքը Տաշիրն է:
- 3) Բնակչության թվաքանակով զիջում է միայն Սյունիքի մարզին:
- 4) Քաղաքների թվով հանրապետությունում առաջինն է՝ ութ քաղաք:

48

Ո՞ր քաղաքներն են գտնվում Սյունիքի մարզում:

- 1) Գյումրի և Վանաձոր
- 2) Միսիան և Գորիս
- 3) Մարտունի և Վարդենիս
- 4) Սևան և Գավառ

49

Գեղարքունիքի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հողաբուսական ծածկույթը չի ենթարկվում վերընթաց գոտիականության:
- 2) Հողածածկույթում տիրապետում են լեռնային սևահողերը:
- 3) Հողածածկույթում շատ են կիսաանապատային գորշ հողերը:
- 4) Հարավում տարածվում են աղուտներ:

50

Նշվածներից ո՞ր լեռնագագաթն է ամենաբարձրը Արցախի լեռնաշղթայում:

- 1) Քաշաթաղ
- 2) Մեծ Քիրս
- 3) Գոմշասար
- 4) Մայմեխ

51

Բնական և մարդածին այն օբյեկտները, որոնք ունեն եզակիություն, պատմական կամ գեղարվեստական արժեք, գեղագիտական գրավչություն, առողջարարական-կազդուրիչ նշանակություն և կարող են օգտագործվել հանգստի ու զբոսաշրջության կազմակերպման համար, կոչվում են.

- 1) հանքային ռեսուրսներ
- 2) կենսաբանական ռեսուրսներ
- 3) հողային ռեսուրսներ
- 4) ռեկրեացիոն ռեսուրսներ

52

Երկրի նավթի հետախուզված պաշարները կազմում են մոտ 24 մլն մ³, իսկ բնակչության թիվը՝ 3 մլն մարդ: Որքա՞ն կկազմի ռեսուրսաապահովվածությունը 1 բնակչի հաշվով:

- 1) 7 մ³/մարդ
- 2) 8 մ³/մարդ
- 3) 5 մ³/մարդ
- 4) 6 մ³/մարդ

53 Շրջակա միջավայրի վրա առավել շատ բացասական ազդեցություն է թողնում.

- 1) կոնյակի արտադրությունը
- 2) ալյումինաձուլությունը
- 3) կարի արտադրությունը
- 4) սարքաշինությունը

54 Կենդանիների պահպանության միջոցառում է.

- 1) կլիմայավարժեցումը
- 2) առաջավոր ագրոտեխնիկայի կիրառումը
- 3) արոտաշրջանառությունը
- 4) ճահիճների և ճահճակալած հողերի չորացումը

55 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Թթվային անձրևների առաջացման միակ պատճառը Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթներն են:
- 2) Օզոնային շերտի քայքայումը բնորոշ է միայն բարեխառն գոտուն:
- 3) Ջերմոցային էֆեկտը պայմանավորված է մթնոլորտում ջրային գոլորշու և ածխաթթու գազի քանակի ավելացմամբ:
- 4) Օդում մեծ քանակությամբ փոշու առկայության պատճառով խոշոր քաղաքներում օդի ջերմաստիճանն ավելի ցածր է, քան դրանցից դուրս:

56 Տրված են աշխարհի նշանավոր լճեր: Նշել մնացորդային ծագում ունեցող լճերը.

- | | |
|--------------|-------------------|
| 1) Վեներն | 5) Մեծ արջի |
| 2) Մեծ աղի | 6) Արալյան |
| 3) Կասպից | 7) Մեծ ստրուկների |
| 4) Իսիկ Կուլ | 8) Մեոյալ |

57 Գրել այն երկրների համարները, որոնք ելք ունեն դեպի ծով.

- | | |
|------------|-------------|
| 1) Պերու | 5) Ավստրիա |
| 2) Չեխիա | 6) Լիբանան |
| 3) Եգիպտոս | 7) Պարագվայ |
| 4) Չադ | 8) Մեքսիկա |

58 Գրել այն երկրների համարները, որոնք առաջատար են ձկնային տնտեսությունների զարգացվածությամբ.

- | | |
|--------------|--------------|
| 1) Հնդկաստան | 5) Լեհաստան |
| 2) Պերու | 6) Բոլիվիա |
| 3) Չինաստան | 7) Ինդոնեզիա |
| 4) Գերմանիա | 8) Ուկրաինա |

59

Գրել այն երկրների համարները, որոնք գտնվում են Լատինական Ամերիկայում:

- | | |
|--------------|--------------|
| 1) Նիգերիա | 5) Ֆրանսիա |
| 2) Էկվադոր | 6) Չիլի |
| 3) Արգենտինա | 7) Կոլումբիա |
| 4) Ճապոնիա | 8) Իտալիա |

60

Գրել այն երկրների համարները, որոնք ԵՄ կազմում են.

- | | |
|--------------|-------------|
| 1) Ավստրալիա | 5) Իրաք |
| 2) Դանիա | 6) Բրազիլիա |
| 3) Հունաստան | 7) Թուրքիա |
| 4) Բուլղարիա | 8) Գերմանիա |

61

Գրել այն ջրեկների համարները, որոնք մտնում են Որոտանի կասկադի մեջ.

- | | |
|-------------|------------|
| 1) Արգելի | 5) Արգնիի |
| 2) Երևանի | 6) Շամբի |
| 3) Քանաքեռի | 7) Այրումի |
| 4) Տաթևի | 8) Սևանի |

62

Արաքսի ձախակողմյան տրված վտակների համարները դասավորել հյուսիսից հարավ ուղղությամբ:

- 1) Ախուրյան
- 2) Արփա
- 3) Հրազդան

63

ՀՀ տրված լճերի համարները դասավորել արևմուտքից արևելք ուղղությամբ.

- 1) Արփի
- 2) Սև
- 3) Քարի

(64-65). Աշտարակ քաղաքում օրվա ընթացքում չափել են օդի ջերմաստիճանը և ստացել են -1° , -4° , -6° , -2° , $+7^\circ$, $+16^\circ$, $+10^\circ$, $+4^\circ$ ցուցանիշները:

64 Որոշել օդի ջերմաստիճանի տատանման օրական լայնույթը (ամպլիտուդ):

65 Որոշել օդի օրական միջին ջերմաստիճանը:

66 Վայրի աշխարհագրական կոորդինատներն են՝ հս. լ. $45^\circ 30'$ և արմ. ե. 80° : Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22-ի կեսօրին:

67

Որոշել միևնույն միջօրեականի վրա գտնվող երկու կետերի միջև հեռավորությունը (կմ-ով), եթե դրանցից մեկը հվ. լ. 17° -ի վրա է, իսկ մյուսը՝ հվ. լ. 36° -ի:

68

Երկրի բնակչության թիվը 2,8 մլն մարդ է, բնակչության միջին խտությունը՝ 70 մարդ/կմ²: Որքա՞ն է երկրի տարածքի մակերեսը:

69

Ֆրանսիայի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է թեթև արդյունաբերությունը:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 3) ՀՆԱ-ի մեծությամբ առաջինն է Արևմտյան Եվրոպա տարածաշրջանում:
- 4) Տնտեսությունը զարգացման հետինդուստրիալ փուլում է:
- 5) Հարուստ է նավթի պաշարներով:
- 6) Էլեկտրաէներգիայի մեծ մասը բաժին է ընկնում աեկներին:

70

ՀՀ Տավուշի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) ՀՀ-ում ծխախոտի մշակության գլխավոր շրջաններից է:
- 2) Մարզի ընդերքում կան մարմարի, բենթոնիտային կավի և ածխի պաշարներ:
- 3) ՀՀ խաղողագործական չորս շրջաններից մեկն է:
- 4) Խոզաբուծությունը թույլ է զարգացած:
- 5) Թեթև արդյունաբերության ենթաճյուղերից առավել զարգացած է տեքստիլը:
- 6) ՀՀ փայտամշակման փայտամշակման խոշորագույն կոմբինատը Իջևանում է: